ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ հունվարի 2023 թվականի №__-Ա
ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Մատակարար) 2021 թվականի օգոստոսի 10-ի №ՄՇ/24465 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտնել է, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ֆիզիկական անձանց կողմից բնակելի տների ապօրինի միացումների դեպքեր, որոնք պատմականորեն միացած են ջրային համակարգին, օգտվում են խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման ծառայություններից, սակայն չեն հանդիսանում Մատակարարի բաժանորդ այն պատճառով, որ վարձակալության պայմանագրի շրջանակում պատշաճ կարգով բաժանորդների տվյալները չեն հանձնվել Մատակարարին: Մատակարարը նշել է, որ ապօրինի միացումները հիմնականում Հայաստանի Հանրապետության մարզերում են և մերձերևանյան ջրատարներից, որոնց հետևանքով չհաշվառվող ջրի օգտագործումը ջրասակավության շրջանում հանգեցնում է Երևան քաղաք մղվող խմելու ջրաքանակի նվազման: Հաշվի առնելով տվյալ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական և ֆինանսական վիճակը, Մատակարարն առաջարկել է բոլոր այն դեպքերի համար, երբ միացումները կատարվել են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի №658Ն որոշմամբ սահմանված կարգով կազմել ապօրինի սպառման արձանագրություն, և բնակիչները պարզեցված կարգով դառնան Մատակարարի բաժանորդներ,

բ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան, Ամասիա, Աշոցք և Գյումրի համայնքների ղեկավարները գրություններով հայտնել են, որ իրենց համայնքներում որոշ սպառողների համակարգեր 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ փատացի միացված են եղել Մատակարարի կողմից սպասարկվող ջրամատակարարման համակարգերին, սակայն վերջիններս մինչ օրս բաժանորդ չեն հանդիսանում,

գ) համայնքների ղեկավարների գրություններով ներկայացված բնակիչների ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման համակարգերի՝ Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացմանն ուղղված լրացուցիչ նախագծանախահաշվային, շինմոնտաժային և այլ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն չկա,

դ) Մատակարարը 2022 թվականի դեկտեմբերի 14-ի №ՄԾ/39565 և Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեն 2022 թվականի դեկտեմբերի 22-ի №01/08/5590-2022 գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

ե) քննարկվող դեպքերը բազմաթիվ են, և ջրային համակարգում չհաշվառվող ջրի քանակների նվազեցման արդյունքում կավելանա մանրածախ ջրամատակարարման ծավալը, որն իր հերթին դրական ազդեցություն կունենա սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների վրա,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշման 1-ին կետով սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի №658Ն որոշմամբ սահմանված կարգով կազմված ապօրինի սպառման վերաբերյալ արձանագրությունների հիման վրա օգտագործված խմելու ջրի և (կամ) հեռացված (մաքրված) կեղտաջրի քանակների դիմաց վճարման ենթակա գումարները սույն որոշման հավելվածում ընդգրկված բնակիչների կողմից վճարվելուց հետո վերջիններիս հետ Կանոնների 22.1 և 22.3 կետերով սահմանված ընթացակարգերով կնքվում

են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան, Ամասիա, Աշոցք և Գյումրի համայնքների ղեկավարներին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
__ հունվարի 2023թ.